ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության վերաբերյալ

հունիսի 7, 2026 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

2026 թ. հունիսի 7-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների

քվեարկության օրվա գործընթացների վերաբերյալ

2026 թվականի հունիսի 7-ին «Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրությունների քվեարկության օրվա դիտարկում:

Առաքելության շրջանակներում ներգրավվել է 712 դիտորդ, որոնք վերահսկել են քվեարկության ընթացքը Հայաստանի ողջ տարածքում: 520 դիտորդ դիտարկել է ամբողջ քվեարկության օրվա գործընթացները 260 ընտրատեղամասում: Դիտարկումն իրականացվել է պատահական ընտրանքի մեթոդաբանությամբ, որը հնարավորություն է տալիս վիճակագրական մեթոդների կիրառման միջոցով չափել քվեարկության օրվա գործընթացների որակը: Թեև դիտարկումն իրականացվել է երկրի բոլոր ընտրական տեղամասերի միայն փոքր մասում՝ 13%-ում, ընտրանքի վրա հիմնված մեթոդը թույլ է տալիս պատկերացում կազմել ընտրական գործընթացի մասին՝ համապետական մակարդակով:

Ի լրումն, 8 դիտորդ հսկել է քվեարկությունը 6 քրեակատարողական հիմնարկում, և 6 դիտորդ դիտարկել է շրջիկ արկղով քվեարկություն կազմակերպող ընտրատեղամասերը, այդ թվում՝ ուղեկցելով շրջիկ արկղը 3 հոգեբուժական հաստատությունում և 3 ռազմաբժշկական հաստատությունում:

Շրջիկ դիտորդներից բաղկացած 54 խումբ այցելել է ընտրանքից դուրս գտնվող 456 (23%) ընտրատեղամաս՝ միաժամանակ հսկելով իրավիճակը համայքների տարածքներում:

70 դիտորդ հսկել է 38 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) աշխատանքը:

«Ականատես» դիտորդական առաքելության գնահատականներով՝ քվեարկության օրն, ընդհանուր առմամբ, անցել է խաղաղ միջավայրում, քաղաքական մրցակցության և ընտրողների դինամիկ ու ակտիվ մասնակցության պայմաններում: Միաժամանակ, որոշ տեղամասերում նկատվել է լարվածություն՝ առերևույթ ուղղորդումների, քվեարկության գաղտնիության խախտումների և դրա փորձերի, վերահսկողության և դրա փորձերի, ընտրության գործընթացի որոշ դերակատարների ագրեսիվ դրսևորումների պատճառով: Տարբեր բնույթի ընտրախախտումներում ներգրավվել են տարբեր կուսակցությունների և դաշինքների ներկայացուցիչներ:

Ընտրական հանձնաժողովների աշխատանքը, որոշ տեխնիկական թերություններով հանդերձ, ապահովել է ընտրողների քվեարկության և արդյունքների ամփոփման պատշաճ գործընթացները: Ոստիկանությունը ևս հիմնականում իրականացրել է օրենքով սահմանված իր գործառույթները:

Նախապատրաստական փուլ

Քվեարկության նախապատրաստման գործընթացը հիմնականում կազմակերպվել է սահմանված ընթացակարգերին համապատասխան, առանց լուրջ խախտումների:

Նախապատրաստական նիստերը հիմնականում մեկնարկել են սահմանված ժամանակացույցով: Տեղամասերի 69.62%-ում (181 տեղամաս) նիստը սկսվել է 07:00-ին, 28.08%-ում (73 տեղամաս)՝ 07:00-07:20 ընթացքում, իսկ 2.31%-ում (6 տեղամաս)՝ 07:20-07:40 ժամանակահատվածում:

- Տեղամասերի 1.54%-ում (4 տեղամաս) նախապատրաստական աշխատանքները սկսվել են առանց քվորումի առկայության:
- Տեղամասերի 0.77%-ում (2 տեղամաս) խախտվել է վիճակահանության անցկացման կարգը:
- Տեղամասերի 0.38%-ում (1 տեղամաս) տեխնիկական սարքի մասնագետը չի ապահովել սարքի նախապատրաստման ընթացակարգը:
- Տեղամասերի 30.38%-ը (79 տեղամաս) դժվարամատչելի է եղել հենաշարժողական, իսկ 6.15%-ը (16 տեղամաս)՝ տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար:
- Տեղամասերի 5.00%-ում (13 տեղամաս) սենյակի կահավորանքը խախտել է քվեարկության գաղտնիությունը, իսկ 0.77%-ում (2 տեղամաս)՝ դժվարացրել է ընտրական գործընթացի դիտարկումը:
- Տեղամասերի 0.77%-ում (2 տեղամաս) բացակայել են ընտրողների ցուցակները, իսկ 3.08%-ում (8 տեղամաս)՝ կուսակցությունների/դաշինքների ցուցակները:
- Տեղամասերի 2.69%-ում (7 տեղամաս) տեխնիկական սարքով տպված ընտրողների թիվը տարբերվել է պատին փակցված հիմնական ցուցակների թվից:
- Տեղամասերի 1.92%-ում (5 տեղամաս) առկա են եղել չհրկիզվող պահարանի, իսկ 0.38%-ում (1 տեղամաս)՝ քվեատուփի հետ կապված պահանջների խախտումներ:
- Տեղամասերի 0.38%-ում (1 տեղամաս) արձանագրվել է կողմնակի անձանց ներկայություն նախապատրաստական փուլում:

Նախապատրաստական փուլի միջադեպեր

Տեղամասերում տեղակայված դիտորդների կողմից դիտարկվել են միջադեպեր, որոնց մի մասը ներկայացվում է ստորև:

Արձանագրվել է տեղամասային կենտրոնի բացմանն առնչվող խնդիր.

- 8/38 տեղամասում հանձնաժողովի նախագահի ուշացման պատճառով տեղամասային կենտրոնը բացվել է միայն ժամը 07:18-ին, ինչի հետևանքով մինչ այդ որևէ մեկի մուտքը տեղամասային կենտրոն չի թույլատրվել: Դիտորդի գնահատականը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Կահավորման հետ կապված խնդիրները դրսևորվել են մասնավորապես հետևյալ կերպ.

- 8/61 տեղամասում քվեախցիկների ետնամասում գտնվել են սանհանգույցներ, որտեղ առկա է եղել ելումուտ: Հանձնաժողովի նախագահը միջոցներ չի ձեռնարկել լուծելու տվյալ խնդիրը:

- 13/16 տեղամասում քվեախցիկները տեղադրված են եղել միմյանց միացված սեղանների վրա, ինչի պատճառով ընտրողները մի շարք դեպքերում անցել են մյուս քվեախցիկի հետնամասով: Դիտորդի նկատառումից հետո սեղաններն առանձնացվել են:
- 14/6 տեղամասում քվեախցիկների ետևում առկա է եղել վարագույր, որն ամրացված չի եղել հարակից պատերին, ինչը չի բացառել քվեարկության գաղտնիության խախտման ռիսկը: ՏԸՀ նախագահը հրաժարվել է վերացնել խնդիրը, ինչի մասին տեղեկացվել է վերադաս հանձնաժողովին:
- 27/3 տեղամասում քվեախցիկների ետնամասում առկա է եղել մեծ տարածություն՝ ապակեպատ դռներով և պատուհաններով: Խնդիրը բարձրաձայնելուց հետո հանձնաժողովի անդամները դրանք ծածկել են թղթերով:
- 27/10 տեղամասում քվեախցիկներից մեկը տեղադրված է եղել այնպես, որ կողքից տեսանելի կարող էր լինել քվեարկությունը: Դիտորդի դիտարկումից հետո հանձնաժողովը որոշել է հեռացնել տվյալ քվեախցիկը սենյակից:
- 24/34, 29/20 և 38/26 տեղամասերում քվեախցիկների հետնամասում առկա են եղել դռներ, որոնք պատշաճ փակված և կնքված չեն եղել (բացակայել են կպչուն ժապավենները): Թիվ 29/20 տեղամասում դիտորդի պահանջով դուռը որոշ ժամանակ անց փակվել է կպչուն ժապավենով, սակայն 24/34 և 38/26 տեղամասերում հանձնաժողովի նախագահները որևէ գործողություն չեն ձեռնարկել խնդիրը վերացնելու ուղղությամբ:

Ընտրատեղամասերում տեղադրված քվեախցիկների քանակը չի համապատասխանել այդ տեղամասերում ընտրողների քանակի համար սահմանված պահանջներին և առաջացրել է գործընթացի կազմակերպման խնդիրներ:

- 8/61 տեղամասում (1,745 ընտրող) տեղադրված է եղել ընդամենը 2 քվեախցիկ: Դիտորդի արձանագրումից հետո, ժամը 13:00-ի սահմաններում, ավելացվել է ևս մեկը:
- 11/34 տեղամասում (2,068 ընտրող) տեղադրված է եղել ընդամենը 3 քվեախցիկ: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է ավելացնել 4-րդը՝ նշելով, որ դա կխախտի սենյակի կահավորման պահանջները տարածքի սղության պատճառով:

Նկատվել են ընտրողների ցուցակին առնչող խնդիրներ.

- 25/27 տեղամասում արձանագրվել է թվային անհամապատասխանություն. տեխնիկական սարքավորման կողմից տպված տեղեկանքում ընտրողների թիվը կազմել է 1,287, մինչդեռ տեղամասային կենտրոնում փակցված հիմնական ցուցակում առկա թիվը եղել է 1,273: Սա բացատրվել է թարմացված ցուցակները տեղամասային կենտրոնում փակցված չլինելու հանգամանքով:

Արձանագրվել են քվեարկության պարագաներին առնչվող պահանջների խախտումներ.

- 23/20 և 4/54 տեղամասերում չիրկիզվող պահարանը մինչև ժամը 07:00-ն արդեն իսկ բացված է եղել: 23/20 տեղամասում 07:00-ին նկատվել է, որ պահարանի վրա սոսնձված ստորագրված թուղթը պատռված է, իսկ 4/54 տեղամասում հանձնաժողովի նախագահը պահարանը բացել է 06:55-ին՝ պատճառաբանելով, թե իրավունք ունի այն բացել 06:45-ից:

Քվեարկություն

Քվեարկությունն, ընդհանուր առմամբ, դիտարկված ընտրանքի տեղամասերում կազմակերպվել է սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Քվեարկության համար ընտրատեղամասերի 93.85%-ը (244 տեղամաս) բացվել է ժամը 08:00-ին: Տեղամասերի 1.92%-ը (5 տեղամաս) բացվել է նախատեսվածից շուտ, իսկ 4.23%-ը (11 տեղամաս)՝ ուշացումով (08:01-08:10):

- Ընտրանքի տեղամասերի 8.14%-ում (21 տեղամաս) արձանագրվել է տեխնիկական սարքի խափանման 1-5 դեպք:
- Տեղամասերի 1.16%-ում (3 տեղամաս) խախտվել է վիճակահանությամբ սահմանված աշխատանքային գործառույթների հերթափոխը:
- Տեղամասերի 8%-ում (21 տեղամաս) արձանագրվել է 24 ուղղորդման/վերահսկվող քվեարկության դեպքեր:
- Տեղամասերի 2.69 %-ում (7 տեղամաս) արձանագրվել են առերևույթ քվեարկության գաղտնիության միտումնավոր խախտման 7 դեպք, որոնց մի մասը միտված է եղել քվեարկությունը վերահսկելուն:
- Տեղամասերի 18.22% (47 տեղամաս) դեպքում 1-3 ընտրողների անվան դիմաց արդեն իսկ եղել է այլ անձի ստորագրություն:
- Տեղամասի ներսում կուտակումներ արձանագրվել են տեղամասերի 22.48%-ում (58 տեղամաս), իսկ հարակից տարածքներում կուտակումներ՝ տեղամասերի 12.02%-ում (31 տեղամաս):
- Տեղամասերի 5.43%-ում (14 տեղամաս) առկա են եղել կողմնակի անձինք:
- 5.04%-ում (13 տեղամաս) նկատվել է ենթադրյալ վերահսկողություն իրականացնող անձանց շարունակական ներկայություն մուտքի մոտ:
- Տեղամասերի 0.78%-ում (2 տեղամաս) խոչընդոտվել են տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց գործողությունները:
- Տեղամասերի 2.71%-ում (7 տեղամաս) ՏԸՀ նախագահը կամ քարտուղարը հրաժարվել են գրանցել դիտորդի գնահատականը խախտումների վերաբերյալ:
- Տեղամասերի 11.63%-ում (30 տեղամաս) արձանագրվել են հանձնաժողովի անդամներին հյուրասիրության դեպքեր՝ հիմնականում կուսակցությունների կողմից:

Տեղամասերի մեծամասնությունը (95.35%) ընտրողների քվեարկության համար փակվել է սահմանված ժամին՝ 20:00-ին:

Քվեարկության ընթացքի միջադեպեր

Տեղամասերում տեղակայված, ինչպես նաև շրջիկ դիտորդների կողմից դիտարկվել են միջադեպեր, որոնց մի մասը ներկայացվում է ստորև:

Քվեարկության օրվա ընթացքում տեղ են գտել քվեաթերթիկներ լուսանկարահանելու, կամ այլ կերպ բաց (նաև ընտանեկան) քվեարկելու և քվեարկությունն այլոց համար բացահայտելու դեպքեր:

- 10/38, 33/10, 38/26 տեղամասերում ընտրողները փորձել են կամ հասցրել են հեռախոսով լուսանկարել քվեաթերթիկները (10/38-ում արձանագրվել է 3 առանձին

դեպք՝ ժամը 09:15, 10:05, 12:21-ին): Հանձնաժողովի նախագահները կանխել կամ արձանագրել են գործընթացը, սակայն ոստիկանություն չի հրավիրվել:

- 10/38 տեղամասում ընտրողն իր քվեաթերթիկը ցուցադրել է ընտրող որդուն:
- 14/56 տեղամասում ընտրողը քվեարկել է բացահայտ՝ առանց քվեախցիկ մտնելու, իսկ նախագահը միջոցներ չի ձեռնարկել:
- 33/12 տեղամասում ընտրողը քվեարկելուց հետո մտել է մեկ այլ զբաղված քվեախցիկ, որից հետո քաղաքացիները միասին են դուրս եկել:

Տեղ են գտել ընտրողների քվեարկությունը առերևույթ վերահսկելու կամ վերահսկողության փորձ անելու, միջամտելու և ուղղորդման դեպքեր, այդ թվում՝ քաղաքական ուժերի ներկայացուցիչների և ՏԸՀ անդամի կողմից:

- 4/47 տեղամասում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձինք ամբողջ ընթացքում կանգնել են քվեատուփի կողքին, դրսում զրուցել և ներս են բերել ընտրողներին: Նույն տեղամասում «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձինք թևանցուկ ներս են բերել երկու կնոջ, ովքեր առերևույթ ֆիզիկական օգնության կարիք չեն ունեցել:
- 7/6 տեղամասում «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձը շարունակաբար զրուցել է ռուսախոս ընտրողների հետ թե՛ բակում, թե՛ սենյակում:
- 8/7 տեղամասում ամուսինները մոտեցել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձին՝ ասելով «մենք ձեզանից մեկն ենք», ապա պահանջել են միայն 16 համարի քվեաթերթիկը: «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձի նկատողությունից հետո կինը քվեախցիկում շարունակել է ուղղորդել ամուսնուն: Տվյալ դեպքն արձանագրվել է:
- 10/30 տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձն ակտիվորեն ուղեկցել է ընտրողներին դեպի քվեախցիկ և քվեատուփ՝ առաջ ընկնելով հանձնաժողովի նախագահից և բացատրելով քվեարկության կարգը: Քարտուղարը մերժել է դիտորդի գնահատականի արձանագրումը գրանցամատյանում:
- 11/42 տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձինք (2-ը ներսում, 2-ը՝ դրսում) կանգնել են մուտքին շատ մոտ և ակտիվորեն շփվել ընտրողների հետ: Տվյալ երևույթը դադարեցվել է ոստիկանության միջամտությամբ:
- 14/48 տեղամասում «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձինք տետրում հատուկ նշումներով վերահսկել են մուտք գործողներին, ընդ որում, վստահված անձանցից մեկը, տեսնելով տեղամաս մուտք գործած ընտրողին, բարձրաձայն հարցրել է վերջինիս՝ «բա ընտանիքդ ու՞ր ա»:
- 21/6 տեղամասում ՏԸՀ անդամը, տարեց կնոջը քվեաթերթիկների թվերը ցույց տալով, 16-րդ համարի մոտ շեշտել է. «Սա էլ 16-ն է, գնա՛ ընտրիր», ինչին կինը բարձրաձայն արձագանքել է. «Այո՛, ես 16-ին էլ ընտրելու եմ»:
- 29/20 տեղամասում երիտասարդը մոտեցել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձին՝ հայտնելով. «Ախպերս, հետա ընտանիքով եկել ենք»:
- 30/53 տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձինք ողջունել են ընտրողներին («ընտրի՛ գնա», «եկել ե՞ս ընտրության»): Դիտորդը

նաև նկատել է, որ նրանց՝ ծխելու նպատակով դուրս գալու ընթացքում ընտրողների հոսքը նվազել է, իսկ վերադառնալուն պես՝ կտրուկ աճել:

- 34/3 տեղամասում «Հայաստան» դաշինքի վստահված անձը հեռախոսն ուղղել է քվեախցիկների ուղղությամբ՝ ստեղծելով վերահսկողության ռիսկ, մինչդեռ խցիկների դիրքը լիարժեք չի ապահովել գաղտնիությունը (նախագահը մերժել է շտկել կամ գրանցել խախտումը):
- 38/26 տեղամասում «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձն ուղեկցել և ուղղորդել է ընտրողներին մինչև քվեախցիկ:

Քվեարկության ընթացքում իրականացվել է քարոզչություն, այդ թվում՝ քաղաքական ուժերի տարբերանշանները կրելու միջոցով:

- 25/28 տեղամասում երիտասարդ ընտրողը բարձրաձայն գոռացել է «Սամվել-վարչապետ» և հայտարարել, որ քվեարկում է «Ուժեղ Հայաստան» դաշինքի օգտին:
- 30/7 տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձը բացահայտ քարոզել է՝ «ընտրեք, որ խաղաղություն լինի»: Այս գործողությունը դադարեցվել է «Հայաստան» դաշինքի վստահված անձի և նախագահի միջամտությամբ:
- 35/56 տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձը կրել է կուսակցության քարոզարշավի հետ ասոցացվող խորհրդանիշը (ՀՀ քարտեզի տեսքով)՝ պնդելով, որ դա զարդ է:

Քվեարկությանը օրը նկատվել են կողմնակի անձանց կողմից ընտրողների տեղափոխման և հնարավոր վերահսկողության դեպքեր:

- 2/13 տեղամասում «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձի մուտքն արգելվել է վկայականի բացակայության (և վստահված անձանց քանակը գերազանցելու) հիմքով: Նա մնացել է 50մ շառավղով տարածքում, հեռանալուց հետո վերադարձել է այլ հագուստով, դիմավորել երիտասարդներին, իսկ ավելի ուշ սնունդ է բերել ՏԸՀ-ի համար:
- 4/47 տեղամասում երկու անձ տևական ժամանակ վերահսկել են մուտքը, դիտորդի կողմից լուսանկարվելուց հետո հեռացել են, ապա վերադարձել՝ փոխելով հագուստը (ոստիկանությունը և նախագահը չեն արձագանքել): Նույն տեղամասում հայտնաբերվել է առանց վկայականի անգլիախոս անձ, ով ներկայացել է որպես միջազգային դիտորդ: Նա հեռացվել է ոստիկանության միջոցով:
- 9/6 տեղամասի մուտքի մոտ 4 տղամարդ պարբերաբար շփվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձի հետ: Ոստիկանի 3-րդ զգուշացումից հետո նրանք հեռացել են:
- 15/27 և 35/57 տեղամասերում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ունեցել է սահմանվածից ավել վստահված անձինք (մի մասը՝ մուտքի մոտ դրսում):
- 16/41 տեղամասում նկատվել է մեծ թվով տարեցների (17-ից ավել) կազմակերպված տեղափոխում Ford Transit մակնիշի մեքենայով:
- 29/41 տեղամասում 49RR888 պետհամարանիշով Range Rover մակնիշի մեքենան մի քանի անգամ ընտրողների է տեղափոխել տեղամաս:
- 35/56 տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձը 3 ժամ շարունակ գտնվել է մուտքի մոտ և շփվել ընտրողների հետ: Նույն

տեղամասում ոստիկանության ծառայողը 1.5 ժամ անընդմեջ գտնվել է ներսում և հեռացել միայն ԸԸՀ-ի միջամտությունից հետո:

Որոշ խնդրահարույց դեպքերում նկատվել է համայնքապետերի և վարչական ղեկավարների ուղղակի ներգրավումը.

- 16/41 տեղամասում Բաղրամյանի համայնքապետ Միհեր Հարթանյանն առանց վկայականի տևական ժամանակ գտնվել է ներսում, զրուցել ընտրողների հետ, սնունդ հյուրասիրել ՏԸՀ-ին: Հանձնաժողովը և տեղամասում գտնվող այլ կազմակերպության դիտորդին համոզել են չարձանագրել դեպքը, սակայն ԵԱՀԿ դիտորդների ներկայությամբ խախտման գնահատականը արձանագրվել է գրանցամատյանում:
- 22/32 տեղամասի մուտքին հարակից տարածքում (30մ հեռավորության վրա) Գյուլագարակի համայնքապետ Խաչիկ Վարդանյանը զրուցել և ուղղորդել է ընտրողներին, ինչի վերաբերյալ կազմվել է առանձին արձանագրություն:
- 38/32 տեղամասում Խաշթառակի վարչական ղեկավար Անդրանիկ Վիրաբյանը նստել է մուտքի մոտ՝ 10-ից ավելի անձանցից բաղկացած խմբի հետ, և շփվել ընտրողների հետ:

Քվեարկության օրն արձանագրվել են նաև որոշ տեղամասերում ճնշումների, վիճաբանությունների և դիտորդների իրավունքների խոչընդոտման դեպքեր, ինչը ստեղծել է վախի և ճնշման մթնոլորտ:

- 4/47 տեղամասում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձինք դիտավորյալ կանգնել են դիտորդների կողքին՝ նպատակ ունենալով կաշկանդել նրանց աշխատանքը:
- 6/50 տեղամասում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձը բղավելով և ճնշում գործադրելով դուրս է վռնդել տարեց ընտրողին, որը կորցրել էր կտրոնը: ՏԸՀ նախագահը չի կանխել միջադեպը:
- 9/22 տեղամասում «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձը տևական ժամանակ գտնվել է քվեախցիկներին անմիջապես հարակից տարածքում և փաստացի ստանձնել ՏԸՀ նախագահի գործառույթները՝ կազմակերպելով ընտրողների քվեարկության հետ կապված գործընթացները: Երբ այցելուի կարգավիճակ ունեցող անձը բարձրաձայնել է խնդիրը և արձանագրել խախտումը գրանցամատյանում, վստահված անձը ոչ միայն չի դադարեցրել իր վարքագիծը, այլև սկսել է ճնշում գործադրել այցելուի նկատմամբ՝ բղավելով, սպառնալով և հայտարարելով, որ ի պատասխան՝ կեղծ գրառում կկատարի նրա դեմ: Վստահված անձը գրանցամատյանում կատարել է ակնհայտորեն կեղծ գրառում այցելուի կողմից ուղղորդման վերաբերյալ, չնայած ներկա անձանց և ՏԸՀ անդամի կողմից հաստատվել է, որ այցելուն որևէ ընտրողի չի ուղղորդել: Միջադեպն այնուամենայնիվ ստեղծել է վախի և ճնշման մթնոլորտ, որի հետևանքով այցելուն ստիպված է եղել լքել ընտրատեղամասը: Միջադեպին ներկա է եղել նաև միջազգային դիտորդ:
- 12/40 տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձը վիճաբանել է «Երիտասարդական ակումբների դաշնություն» ՀԿ դիտորդի հետ՝ իրեն լուսանկարելու պատճառով:
- 14/56 տեղամասում ընտրողը սպառնալիքով հրավիրել է դիտորդին «դուրս գալու և խոսելու»:

- 30/7 տեղամասում քարտուղարն արգելել է դիտորդին լուսանկարել օգնող անձանց ցուցակը, ինչն ի վերջո թույլատրել է միայն անձնագրային տվյալները ծածկելու պայմանով:

Մի քանի տեղամասերում տեղի են ունեցել ընտրողին օգնելու կարգի խախտումներ:

- 10/15 տեղամասում Հայաստանի շնորհապետական կուսակցության վստահված անձն ինքնակամ, առանց ՏԸՀ-ին տեղեկացնելու, մի անձի է ուղղորդել քվեախցիկ՝ տարեց կնոջն օգնելու նպատակով:
- 34/37 տեղամասում որպես օգնող ներկայացած անձն ինքնուրույն է կատարել բոլոր գործողությունները, մինչդեռ ընտրողը կանգնել է հեռվում: Նույնանման դեպք արձանագրվել է 33/12 տեղամասում:

Քվեարկության ընթացքում նկատվել են քվեարկության պարագաներին առնչվող պահանջների խախտումներ:

- 8/46 տեղամասում ժամը 12:00-ին հայտնաբերվել է, որ քվեատուփի վրա բացակայել են կապիչները: Նոր կապիչները բերվել են ԸԸՀ-ից ժամը 12:30-ին:
- 12/12 տեղամասում ժամը 13:30-ի սահմաններում արձանագրվել է, որ քվեատուփը կնքված չի եղել կապիչներով: Դիտորդների կողմից խնդիրը բարձրաձայնելուց հետո հանձնաժողովի անդամները անմիջապես փակել են քվեատուփը կապիչներով:
- 8/7 տեղամասում ՏԸՀ անդամն ընդմիջման ժամանակ խանութ է գնացել՝ իր հետ տանելով անհատական կնիքը, կորցրել է այն, որից հետո մի քաղաքացի գտել և վերադարձրել է տեղամաս:

Մի քանի տեղամասերում նկատվել են քվեաթերթիկների, կտրոնների և դրոշմանիշների հետ կապված խնդիրներ:

- 1/13 տեղամասում առավոտյան առնվազն 20 քվեարկության կտրոնի վրա ՏԸՀ անդամը անփութությամբ անհատական կնիք չի դրել:
- 4/24 տեղամասում ՏԸՀ նախագահը հանձնաժողովի անդամին տվել է 100 դրոշմանիշ առանց հաշվելու կամ ստանալու 100 քվեարկության կտրոնները:
- 14/56 տեղամասում ՏԸՀ անդամը ընտրողին չի հանձնել թիվ 3 քվեաթերթիկը: Խնդիրը շտկվել է «Ուժեղ Հայաստան» դաշինքի վստահված անձի միջամտությամբ:
- 14/56 տեղամասում արձանագրվել է դեպք, երբ ընտրողը մոտեցել է քվեախցիկին առանց ցուցակում սահմանված կարգով ստորագրելու, իսկ նրա կտրոնի վրա բացակայել է անհատական կնիքը:

Մի քանի տեղամասերում ի հայտ են եկել ցուցակների հնարավոր անճշտություններ:

- 4/24 տեղամասում երկու ընտրող հայտարարել են, որ իրենց հասցեներում հաշվառված են իրենց անծանոթ այլ երկու անձինք:

Ստացիոնար բժշկական և ռազմաբժշկական հաստատություններում դիտարկված քվեարկությունը համապատասխանել է շրջիկ արկղով քվեարկության կարգին: Արձանագրվել են մի քանի խնդիրներ:

- 34/29 ընտրատեղամասի ներքո գտնվող Սիսիանի ռազմաբժշկական հաստատությունում ստացիոնար բուժում ստացող զինծառայողին քվեաթերթիկը տրամադրող հանձնաժողովի անդամի կողմից տրվել են բոլոր քվեաթերթիկները բացառությամբ համար 16-ի: Քվեաթերթիկի բացակայությունը նկատել և տեղեկացրել է հանձնաժողովին հենց քվեարկողը, ինչից հետո ստացել է բացակայող քվեաթերթը:
- 4/3 ընտրատեղամասի ներքո գտնվող Երևանի Արաբկիրի ռազմաբժշկական հաստատությունում քվեարկությունը ժամանակավորապես կասեցվել է բացակայող քվեաթերթիկների պատճառով: Երկու անգամ ռազմաբժշակական հաստատություն են բերվել նախ 9-րդ, ապա 11-րդ համարի քվեաթերթիկների տրցակը, քանի որ քվեարկելիս պարզ է դարձել, որ վերջիններս ոչ բավարար քանակով էի բերվել հանձնաժողովի անդամի կողմից:
- Նույն 4/3 ռազմաբժշկական հաստատությունում դիտորդը նկատել է, որ շրջիկ արկղը փակված չի կապիչով եղել ի սկզբանե: Հանձնաժողովի նախագահի ցուցումով անդամներից մեկը տեղամասից բերել և տեղում կապիչով փակել է է քվեատուփըշտկելով տվյալ խնդիրը:

Քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) ընդհանուր առմամբ պահպանվել է քվեարկության կարգը՝ որոշ բացառություններով:

- Արձանագրվել է քվեարկությունը սահմանված ժամին չսկսելու երկու դեպք 9/61 «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում և 10/56 տեղամասում «Նուբարաշեն» ՔԿՀ-ում:

Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը հիմնականում կազմակերպվել է սահմանված ընթացակարգերին համապատասխան, առանց լուրջ խախտումների:

- Տեղամասերի 0.39%-ում (1 տեղամաս) արձանագրվել է կողմնակի անձի ներկայություն:
- Տեղամասերի միայն 0.78%-ում (2 տեղամաս) արձանագրվել են ՏԸՀ-ների կողմից ամփոփման ընթացակարգով նախատեսված գործողությունների ընթացակարգերի խախտումներ:
- Տեղամասերի միայն 0.78%-ում (2 տեղամաս) արձանագրվել են բուն արդյունքների հաշվարկի ընթացակարգի խախտումներ:
- Արձանագրության քաղվածքը և մասնակցության տեղեկանքը տրամադրվել են գրեթե բոլոր տեղամասերում (99.61%):
- Միայն 0.39%-ում (1 տեղամաս) հանձնաժողովը մերժել է տրամադրել տեխնիկական սարքավորման տեղեկանքը դրա իրավունքն ունեցող անձին:

Քվեարկության արդյունքների ամփոփման փուլի միջադեպեր

Հանձնաժողովների կողմից հաշվարկի գործընթացը հիմնականում իրականացվել է սահմանված կարգով, սակայն նկատվել են թերացումներ:

Նկատվել է քվեարկության սահմանված ժամանակահատվածի կոպիտ խախտման դեպք:

- 35/65 տեղամասում ժամը 20:00-ին տեղամասային կենտրոնի դռները փակելուց հետո պարզվել է, որ շենքի ներսում (միջանցքում) այդ պահին եղել է մի քանի հարյուր

զինծառայող: Հրամանատարությունը հայտնել է, որ ուշացել են հերթափոխից: Չնայած զինծառայողները ժամը 20:00-ի դրությամբ չեն գտնվել բուն քվեարկության սենյակում (որն առանձնացված է եղել դռներով), ՏԸՀ-ն թույլատրել է զինծառայողներին քվեարկել:

Նկատվել են արդյունքների ամփոփման ընթացակարգի խախտումներ:

- 3/17 տեղամասում հաշվարկի ժամանակ ՏԸՀ նախագահը քվեատուփից ծրարները հանել է ոչ թե մեկական (ինչպես սահմանված է), այլ մի քանի հատով միաժամանակ՝ դրանք դնելով իր առջև սեղանին:
- 33/36 տեղամասում հանձնաժողովի նախագահը 2 քվեաթերթիկ, առանց ծրարից հանելու, համարել է անվավեր՝ ծրարի վրա ՏԸՀ անդամի անհատական կնիքի հետքի պատճառով, և պատռել է ծրարները: Դիտորդի պահանջով հարցը դրվել է քվեարկության, և չնայած 7 անդամից միայն 3-ն է կողմ քվեարկել անվավեր ճանաչելուն, նախագահին ընդունել է որոշումը՝ կոպտորեն խախտելով կարգը:
- 7/6 տեղամասում դիտորդները նկատել են, որ «Ուժեղ Հայաստան» դաշինքի օգտին քվեարկված 2 քվեաթերթիկի վերևի հատվածը միտումնավոր և նույն կերպ ծալված է եղել (ենթադրյալ ուղղորդման նշան): ՏԸՀ նախագահը մերժել է դիտորդների՝ ապացույցը լուսանկարելու խնդրանքը՝ պատճառաբանելով, թե դա պատահականություն է, և հորդորել է «չխանգարել» գործընթացին:

Ընտրական փաստաթղթերի հանձնում ԸԸՀ-ներ

Ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների ամփոփումից հետո «Ականատես» նախաձեռնության դիտորդները ՀՀ ողջ տարածքի 38 ԸԸՀ-ներում գիշերվա ընթացքում հսկել են ընտրական փաստաթղթերի և պարկերի հանձն-ընդունման և արդյունքների մուտքագրման գործընթացները և վեր հանել խախտումներն ու թերացումները: Բացահայտած խնդիրների ցանկը ներառում է հետևյալը.

- Արձանագրվել են դեպքեր, երբ ՏԸՀ-ները մեծ պարկերը ԸԸՀ են բերել բաց, կիսաբաց կամ վնասված վիճակում:
- Բազմաթիվ ՏԸՀ-ներ սխալմամբ ընտրողների ցուցակների փոքր պարկը տեղադրել են մեծ պարկի մեջ, ինչի հետևանքով ԸԸՀ-ներում ստիպված են եղել արձանագրություններ կազմել, բացել մեծ պարկերը, հանել ցուցակները կամ այլ պարագաներ (կնիքներ, քաղվածքներ, բրայլյան կաղապարներ) և կրկին փակել:
- Բազմաթիվ ՏԸՀ նախագահներ մեծ պարկը ԸԸՀ են ներկայացել առանց ստորագրելու և/կամ կնքելու:
- Որոշ դեպքերում քվեաթերթիկները ԸԸՀ են բերվել առձեռն՝ առանց պարկի, ինչի հիման վրա որոշվել է իրականացնել վերահաշվարկ:
- ՏԸՀ-ների կողմից ԸԸՀ ներկայացված արձանագրություններում/քաղվածքներում նկատվել են զանգվածային վրիպակներ և թվաբանական սխալներ, որոնք շտկվել են ԸԸՀ-ներում: Արձանագրվել են տվյալների շփոթման և անճշտությունների դեպքեր:
- Արձանագրվել են տվյալների մուտքագրման համակարգչային ծրագրի խափանումներ մի շարք ԸԸՀ-ներում, ինչը հանգեցրել է գործընթացի տևական կանգառների և հերթերի առաջացման:

Քվեարկության օրը դիտարկված էական խախտումների վերաբերյալ «Ականատես» դիտորդական առաքելության կողմից ներկայացվել են դիմում-բողոքներ ընտրական

հանձնաժողովներին, առանձին դեպքերով նախապատրաստվում են նաև հաղորդումներ իրավապահ մարմիններին:

———

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնադրվել է 2018թ. օգոստոսին: Նախաձեռնության անդամներն են «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը: Առաքելության նպատակն է նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը ՀՀ օրենսդրության և միջազգային չափանիշներին համապատասխան, ընտրական գործընթացների օրինավորությանը և դրանց նկատմամբ հանրային վերահսկողությանը:

ՀՀ Ազգային Ժողովի 2026 թ. ընտրությունների դիտորդական առաքելությունն իրականացվում է Եվրոպական միության, ԱՄՆ-ի գերմանական Մարշալ հիմնադրամի՝ Անդրատլանտյան հիմնադրամի (GMF TF), Նորվեգիայի դեսպանատան, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է «Ականատես» դիտորդական նախաձեռնությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի դրամաշնորհատուների տեսակետները: